մը և ճառեր։ ՄՁ. թ. 1615 յիշատակարանին մէջ Գրիգոր Պարք. կը յիշատակուի հետեւեալ կերպով. «ի հայրն, Մեսրոպայ եւ ի Պարք. Երուսաղէմի սր. Գրիգորի..», ինչպէս նաև կ'ընդօրինակէ նոյն թուականին Աւետարան մը որ կը գտնուի Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցիին մէջ (Խաչ. Ցուց. տետր ԺԹ. էջ 2192-93)։

ԳՐԻԳՈՐ Դ. ՊԵ. ԵԳԻՊՏԱՑԻ.— (1385-1390). ՄՁ. թ. 661 բոլորգիր Մաշտոցի մը յիշատակարանը այս պատրիարքի մասին տեղեկութիւններ ունի։

ԳՐԻԳՈՐ Ե. ՊԵ. ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԳԱՆՁԱԿԵՑԻ. (ՊԱՐՈՆՏԷՐ).— Հայրը՝ Մարգար, մայրը՝ Թուրվանտա, Գանձակի Սպիտակաշէն գիւղէն. 1581ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. կը ճանապարհորդէ Արևմուտք, և ապա կը դառնայ հայրենիք, աշկ. Պետրոս վրդ. Կարկառեցիին (յետոյ կթղ. Սսոյ, 1602-1609)։ Գրիգոր վերստին կուգայ Ս. Յակոբ եւ կը ձեռնադրուի աբեղայ եւ կը կարգուի վերակացու 1610-1611ին։ Գրիգոր Պարոնտէրի վերակացութեան օրով. Ս. Յակոբի վանքին պարտուց հատուցման համար մեծ գումարներով կը մասնակցին հետեւեալ երևելի խօճաները. Վանեցիներ՝ Աւետ, Դարիպջան, Ախիջան, Միրաք, Փոլաս, Փիլաք, Միրզա. Զուղայեցիներ՝ Սամար, Փանոս, Ռսկան, Աւետիք, Զաքարէ, Սուրիա, Առաքել. Բաղէշցի՝ Զեհիջան, Ամդեցի՝ Թումաջան. Ուռհայեցի՝ Բաղտասար. Հալէպցիներ՝ Պետրոս, Մազուս, Վանիսի. եւայլն. (Սաւասան, էջ 673), որոնցմէ շատերն անձամբ բերած են իրենց նպաստը։ Պարոնտէր 1613ին եպս. կը ձեռնադրուի Աւետիս կթղ.էն Ս. Յակոբի տաճարին մէջ։ Լատինք Պատանատեղւոյն նորոգութեան ժամանակ, լատինական վերտառութիւններ դնելով՝ կ'ուզէին տիրել տեղւոյն. Հայք օրինաւոր դատավարութեամբ, 1617ին կը տիրանան իրենց իրաւունքին։ Գրիգոր պարք. կը նորոգէ Բեթղեհէմի Ս. Աստուածածին եկեղեցին (1621-1622). ըստ հետեւեալ յիշատակարանի, որ գտնուած է նոյն եկեղեցիին ճակատը. «Ես Գրիգոր եպս. որ եմ առաջնորդ սր. Երուսաղիմայ. նորոգեցի ի սր. Ծնունդ զվիճակ ազգիս մերոյ ՌՀ թվին (=1621). յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց, ի վայելումն և ի պարծանս Հայոց. որք տեսանէք լի սրտիւ ասացէք Աստուած ողորմեսցի. և Տէր ձեզ ողորմեսցի, ամէն»։